

Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

19

ԳԼՈՒԽ ՄԺԹ ՎԱՍՆ ՈՐ ԱՆԿԱՆԻՆ Ի ԾԱՌԷ ԿԱՄ ՅԵԿԵՂԵՑՈՅ Ի ՎԱՅՐ

Այլ որ յաղագս ի ծառէ անկեալ մարդոյ մեռելոյ հարցեալ էիր կամ թէ խեղդելով կախեալ զծառէ, չկայ ինչ մեղանս տնկոցն, զի անշունչ եւ անզգայք են, ոչինչ եղեն պատճառք մահու նոցա, որ այնպէս պատահեաց: Այլ թէ առնիցեն ըստ Օրինացն Մովսիսի, յորում հրամայեաց Աստուած վասն անասնոցն, եթէ եղեւ ի նոցանէ յանօթ պղծութեան ոգոց եւ մարմնոց անասնագիտաց մարդոց, զկաթն նորա մի՛ կերիցեն, թէ յայնազգ կենդանեաց իցէ, եւ զանասունն քարկոծ արասցեն, եւ զմիսն շունք կերիցեն: Նոյնպէս եւ թէ եղջերաւորք հարկանիցեն զմարդ, եւ մեռանիցի, սպանցեն զանասունն եւ մի՛ կերիցեն. եւ ոչ զի մեղանք են, այլ զի անօթք եղեն մեղանաց պղծութեանն եւ սպանութեանն: Ըստ այսմ օրինակի թէ եւ առնիցեն զայս՝ հատանել զտունկն զայն, զի մի՛ կերիցեն ի պտղոյ նորա, բայց եթէ յարմատոյ նորա այլ բուսցի եւ պտուղ տացէ, կերիցեն անխտիր, որպէս եւ ծնեալք յանասնոց աստի անխտիր են: Զայս հաւասարապէս ըստ Օրինացն նոյնպէս եւ եկեղեցի ընդունի: Այլ թէ յեկեղեցոյ անկեալ ի խոնարհ, եւ թէ քար անկանիցի յեկեղեցոյ ի վայր ի վերայ մարդոյ, եւ մեռանիցի, անվնաս է եկեղեցին, մատուսցի ի նմա պատարագ, որպէս եւ կամի Տէր: Այլ ի դէպ թուի աւուրս ինչ, որպէս մօր՝ ի վերայ ծննդմց, ունել սուգ. եւ զայդ որպէս կամին՝ արասցեն:

Յատուկ Պոէմ

ԳԼՈՒԽ ՄԻ ՎԱՍՆ ԳՈՂՈՑ Ի ՓԱՅՏ ՀԱՆԵԼՈՅ

Վասն գողոց ի փայտ հանելոյ էիր հարցեալ: Եթէ այլազգի իցէ եւ եթէ քրիստոնեայ, եւ քրիստոնէի հրամայիցեն ի փայտ քարշել, եթէ հնար իցէ՝ խոյս տացէ ի տեղոջէն, ապա թէ ոչ՝ կաշառով զերծցի: Իսկ եթէ այդոքիկ ոչ օգնեսցեն, ապա զհրամայեալսն ի տերանց հարկաւորաբար պարտ է կատարել, այլ ոչ առաւելութեամբ, որպէս հրամայէ Յովհաննէս զինուորացն, թէ մի՛ աւելի քան զհրամայեալսն ձեզ առնիցէք, քանզի Աստուած ի սիրտս հայի, եւ մարդ՝ յերեսս, որպէս հրամայեաց Տէր Սամուէլի:

ԳԼՈՒԽ ՄԻԱ ՎԱՍՆ ՍՊԱՆԵԼՈՑ Ի ԿԵՆԴԱՆԵԱՑ

Այլ թէ մարդոյ լիցի ջորի խումար, կամ ձի աքիան կամ մարդակեր, որպէս զուարակագլուխ ձին Աղէքսանդրի, կամ եզն հարկանող, եւ նա գիտասցէ, եւ այլք ազգ առնիցեն նմա եւ զվնասն ցուցանեն, եւ նա անհոգս արասցէ եւ ոչ հնարեսցէ զնոսա, որպէս արժանն էր, եւ կիցս ընկեցեալ, կամ խածեալ, կամ հարեալ սպանանիցէ զոք, տէր նորա մահապարտ է, եւ անասունն սպանցի, ապա թէ ոչ գիտէր՝ անպարտ է: Եթէ յանսուրբ անասնոց իցէ՝ թէ ձի, թէ ջորի, թէ էշ, ի մեռելոց տէրքն տայցեն, զի ի պէտս հոգոց նոցա ծախիցեն: Սակայն յայտնեսցեն զպատճառն եւ այնոցիկ վաճառեսցեն, որ կարող են խրատել: Եւ զայս դատաստան եդաք երբեմն ըստ Օրինացն, այլ հաստատել կանոնօք կամեցաք՝ մասամբ առաւելեալ:

ԳԼՈՒԽ ՄԻԲ ՎԱՍՆ ՈՐ ՂՐԿԷ ԶՄԱՐԴ Ի ՃԱՆԱՊԱՐՀ, ԵՒ ՄԵՌԱՆԻ ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ

Վասն զմարդ ի ճանապարհ ղրկել ումեք բազում օրինակք տեսանին ի հարցմանս խղճի եւ անխղճի: Զի են ոմանք, որ ի գործ մշակութեան են կարգեալք ի տերանց իւրեանց, եւ կէսք՝ յայգեգործութիւն, եւ այլք՝ ի զինուորութիւն, եւ դարձեալ այլք՝ ի յայլ գործ, որպէս հասարակաց մերոց կենացս օրինօք պատրաստեալ է: Այսոցիկ, որոց ի գործս իւրեանց եկեսցէ որոգայթ մահու, անպարտ են տէրքն նոցա, մանաւանդ այնոցիկ, որք զպատրաստութեան պատուէրն հանապազ կացուցանէ ի լսելիս հնազանդելոց իւրոց: Ապա թէ

հասարակաց միաբանութեան սիրոյ եւ խաղաղական մերոց կենաց զընդդէմսն հրամայիցեն գործել տէրք ծառայից, եւ անդ պատահի ումեք մահ կամ սպանութիւն, մահապարտ է տէրն նորա: Դարձեալ՝ եթէ ոք ի նոցանէ ծանուցանէ տեառն իւրում զվնասն, որ առաջի կայ, եւ տէրն անհոգացեալ անպատրաստաբար առաքէ ի գործն, եւ պատահի վնասն, յորմէ խիթայր, որ առաքեացն՝ արեան պարտ է:

ԳԼՈՒԽ ՄԻԳ ՎԱՍՆ ՈՐՔ ՏՂԱՅ ՈՒՍՈՒՑԱՆԵՆ

Ոչ է պարտ վարձու զմանկունս ուսուցանել ըստ կանոնաց հրամանաց: Եթէ որբք իցեն, զամենայն խնամ տանել նոցա ի դէպ է, ապա թէ չիցեն՝ զկերակուր եւ զհանդերձ միայն իւրքն հոգասցեն: Եւ եթէ կարողք իցեն եւ ըստ ինքեանց յօժարութեանց ընծայ ուսուցողացն տացեն, արժան է հոգեւոր սերմանողացն զմարմնաւորսն հնձել, իսկ եթէ աղքատ՝ ոչ պահանջել: Այլ եթէ ոք հակառակեսցի եւ բռնաբարէ, դատաստանաւ է, զոր ինչ ի մանուկն ծախեալ իցէ, զայն միայն հատուցանել, այլ ոչ զհոգեւորն շնորհի: Այդոցիկ գիետ երթալ դատաւորաց արժան է հոգեւորապէս:

ԳԼՈՒԽ ՄԻԴ ՎԱՍՆ ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ

Եւ զարբեցութեան բազումք անգիտանան զսահման յառաջնորդաց եւ ի սպասաւորաց եկեղեցոյ: Միայն եթէ ոչ ժայթքեն՝ համարձակին ի գործ Արդ, դնելի է զսահմանս նոցա: Արբեցութիւն ըստ ստուգաբանութեան յագեցումն իսկ է, իսկ ժայթքելն եւ կամ ոչ՝ ի կազմուածէ բազում անգամ պատահի մարմնոյ: Իսկ եթէ սահման արբեցութեան յագեցութիւն է, ապա եւ սահման ոչ արբենալոյ անյագեցութիւն է: Դարձեալ՝ նշանակ արբեցութեան դեղեւումն մարմնոյ է եւ բանի: Արդ, որ ըստ այսմ սահմանի կամ նշանի իցէ, ի բաց կալ արժան է յիւրաքանչիւր սպասաւորութենէ եւ լնուլ զապաշխարութեան չափն եւ ապա մատչիլ ի գործ շնորհին, իսկ եթէ անփոյթ արասցեն՝ ընդ դատաստանօք արբեցողացն են:

ԳԼՈՒԽ ՄԻԵ ՎԱՍՆ ԿԱՐԳԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՒ ՏԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ

Զի՞նչ գործ մարդոյ՝ զաստուածպաշտութիւն ծանեաք: Ապա արժան է մարդոյս քննել զպաշտօնակցաց իւրոց, որով մարթագոյն զինքն ջանայցէ առնել մաքուրս եւ զուարթունս՝ առ նոսա հայելով, եւ զկնի այսորիկ հասու լինել կարգաց եկեղեցոյ եւ թագաւորաց, զոր պաշտեմք: Արդ ահա, որպէս ամենեցուն յայտնի է, երկու արարածք եղեն խորհրդականք եւ բանաւորք՝ հրեշտակք եւ մարդիկք. մինն՝ ի պարզ եւ յանխառն բնութենէ, իսկ միւսն՝ ի բազմաց գոյացեալ: Եւ Մովսէս ի սկզբանն ոչ գրեաց յաղագս հրեշտակաց եւ վասն մարդոյ պատմեաց՝ ասելով, եթէ ստեղծ Աստուած զմարդն հող յերկրէ եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն հոգի կենդանի: Այլ ապուշքն, այսինքն՝ տգէտք, կարծեն զԱստուած բերանով եւ այլովք գործիւք վարիլ եւ զանբաւանդակելին ի զգայութիւն բաւանդակեալ. այլ իմանալի է զփչեալն՝ կենդանացոյց կամ հոգիացոյց: Նոյնպէս գիտեա եւ զհողն յերկրէ՝ ոչ մեկին իմանալ հող, այլ բաւանդակ զչորեսին բնութիւնսն ունելով՝ զցամաքն եւ զխոնաւն, զջերմն եւ զցուրտն, եւ զհողմն: Որպէս բժշկացն մանկունք բաժանեն զհողոյն ցամաքութիւնն յոսկերս, եւ զմարմինն՝ ի խոնաւութիւն ջուրցն, եւ զջրոյն՝ յարեան երակսն, զցրտութիւն հողմոյն՝ ի շնչերակսն, զջերմութիւն հրոյն խառնեն ընդ ամենայն: Այլ եւ արականս եւ իգականս բաժանեն եւ զմիսն եւ զմորթն իգական ասեն: Եւ զայս ամենայն Մովսէս ոչ ասաց եւ ոչ զբնութիւն հրեշտակաց, սակայն լինելութիւն է նոցա: Իսկ արդ, անե՞ղք իցեն, կամ ինքնե՞ղք, կամ նա՞խ քան զսկսանիլն արարածոց, վասն որոյ ոչ ասաց Մովսէս, թէ արար Աստուած զհրեշտակս, այլ թէ հրամայեաց սերովբէիցն բոցեղէն սրով պահել զճանապարհ ծառոյն կենաց: Թէ այդ այդպէս է, ապա անեղ պարտիմք իմանալ եւ զջուրն, զի ասաց, թէ ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր, եւ ոչ ասաց, թէ՝ զջուրն, այլ թէ երկիր էր աներեւոյթ եւ անզարդ, եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Այլ իմանալի է մեզ ասել, թէ մինչ արար Աստուած զերկին եւ զերկիր, ընդ նմին արար զամենայն զօրութիւնս երկնից, եւ զջուրս, եւ զքարս եւ զամենայն, որ ինչ յերկրի, զի երկիրս հող միայն ասի ըստ Եբրայեցոց բարբառոյն: Ապա եւ ջուրք, ուրեմն, ընդ երկիր արարան, որպէս եւ Դաւիթ ասէ՝ նորա է ծով, եւ նա արար զնա, եւ զցամաք ձեռք նորա ստեղծին: Եւ ընդ երկնի հրեշտակք արարան, ասելով՝ ո՞ արար զհրեշտակս իւր հոգիս եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ: Հրեշտակս եւ պաշտօնեայս լսելով՝ դասս ոչ յայտնեն, այլ սեռական անուանեն զանունն: Բայց Մովսէս այսպէս ծածկաբար ոչ միայն զդասս ոչ յայտնեաց, այլ եւ ոչ իսկ յիշեաց զհրեշտական ի սկզբանն, այլ յետոյ ասաց առ Աբրահամու, եթէ

եգիտ հրեշտակն զԱգար յանապատին. եւ դարձեալ ասէ՝ եկին հրեշտակք ի Սոդոմ: Եւ ոչ կերպարանս ինչ ասաց, այլ իբրեւ զարս երեւալ. ոչ միայն զսոցա, այլ եւ ոչ զքերովբէիցն եւ ոչ զսերովբէիցն ինչ ասաց զկերպարանս: Իսկ Յակոբ ի տեսլեանն ասէ զկերպս հրեշտակաց, որպէս Ակիւղաս ցուցանէ, ասելով. տեսանէր սանդուխտս հաստատեալ յերկրի, որոյ գլուխն հասանէր յերկինս, եւ բազմութիւն մարդկան թեւաւորաց, որ ելանէին եւ իջանէին: Թուի ինձ՝ եւթանասնիցն կարծելով վասն բանին, զանուանս հրեշտակացն բաւական համարելով, զկերպսն ոչ յիշեն: Սոյն կերպիւ լսեմք եւ զքերովբէսն, զոր ոսկի արար Սողոմոն եւ եդ ի տաճարին, զոր արարեալ էր Մովսէս ի խորանին երկթեւեանս եւ թէ ի թեւ կցող, որք հովանի ունէին ի վերայ քաւութեանն: Դարձեալ եւ ի մեքենովթսն լսեմք քերոբք, եւ առիւծունս, եւ եզինս, եւ ուսք մարդոյ եւ ձեռս, անիւս՝ որպէս կառաց: Եւ ոչ ասեն ստուգիւ կամ կարեն հասու լինել դասուցն եւ ոչ կերպիցն, այլ միայն նմանեցուցանեն, որպէս զթիթեղունս թռուցեալս լուսերամս: Իսկ Միքիաս զզօրս երկնից ասէ զօրուցուցանել շուրջ կացեալ զաթոռովն Աստուծոյ եւ ոչ զթիւ դասուցն եւ ոչ զանուանս կոչէ: Բայց Եսայի ասէ զանուանս սերովբէիցն եւ վեցթեւեան կերպիւ զփառաբանութիւնն յայտնէ: Իսկ Եզեկիէլ այլ դասս յայտնէ եւ յաւելու չորեքկերպեանն եւ չորեքթեւեանն. եւ այս նման է մեքենովթայ տաճարին: Բայց փոխանակ նորա արմաւենոյն՝ սորա արծուին է, թէպէտ եւ ի խորհուրդ առ ի միտս զնոյն բերէ, սակայն կերպիւն որոշի: Տեսանէ Եզեկիէլ եւ անիւս, այսինքն՝ սայլս, այլակերպս եւ ոչ որպէս մեքենովթայ նման, այլ անիւ ի մէջ անուաց, նորոգ եւ հրաշալի: Այս այլ դասս թուի ինձ, քանզի անձնական ասէ զանիւսն, զի ոգի կենդանի զոյր ի նոսա: Եւ ասէ այլ դասս, որ բազմաչեայքն են, ասէ եւ հուր ահագին խառնեալ եւ բորբոքեալ. զայս առանձնական ակնարկէ: Թէպէտ եւ զայս ամենայն ասացին մարգարէքն, սակայն ծածկաբար եւ ոչ յայտնապէս զիւրաքանչիւր դասս: Նաեւ ոչ Տէրն յԱւետարանի անդ այլ ինչ յայտնեաց, բայց միայն զբազմութիւնս հրեշտակաց գնդացն: Բայց սուրբ առաքեալն Յուդա պարզ եւ յայտնի ցուցանէ մեզ եւթն դասք եւ զանուանս իւրաքանչիւրոցն ասէ՝ Հրեշտակք, Հրեշտակապետք, Իշխանութիւնք, Տէրութիւնք, Սերովբէք, Քերովբէք, Պետութիւնք: Իսկ սուրբն Դիոնեսիոս՝ պարծանքն Աթենացոց, Արիսպագացին, առաքելոյն աշակերտ եւ հետեւող, ինն դասս ասաց. զոր առաքեալն երկու ի մի երես ասաց՝ ի զատ ասաց զՀրեշտակապետսն ի Հրեշտակացն եւ զՔերովբէսն ի Սերովբէիցն: Եւ թուեաց զնոսա ինն դասս ստուգութեամբ այսպիսի

կարգաւորութեամբ, յորմէ եւ մեր ուսեալ՝ պատմեմք քում հարցասիրութեանդ, որ են. Ներքին դասք Հրեշտակացն, որք են պատգամաւորք եւ հրամանատարք. եւ փառաբանութիւն է նոցա, զոր հովիւքն լուան՝ փառք ի բարձունս Աստուծոյ: Երկրորդ դաս Հրեշտակապետացն է. եւ փառաբանութիւն է նոցա՝ Տէր, ողորմեա քո արարածոցս, զոր Զաքարիասն լուաւ, թէ՝ մինչեւ ցե՞րբ չողորմեսցիս Երուսաղէմի եւ քաղաքացն Յուդայ: Երրորդ դաս Իշխանութեանցն է, որք են իշխանութեանցն Աստուծոյ փառաբանիչք, ասելով՝ տուաւ քեզ հեթանոսք ի ժառանգութիւն եւ իշխանութիւն քեզ յամենայն ծագս երկրի: Չորրորդ դաս Զօրութեանցն է, որք զօրութեանցն Աստուծոյ են փառաբանիչք, ասելով՝ Տէր հզօր ի պատերազմի: Հինգերորդ դաս Աթոռոցն է, որք են փառաբանիչք աթոռոյն Աստուծոյ, ասելով՝ աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից: Վեցերորդ դաս Պետութեանցն է, որք են փառաբանիչք քահանայութեանն Աստուծող, ասելով՝ դու ես քահանայ յաւիտեան: Եւթներորդ դաս Տէրութեանցն է, որք են փառաբանիչք տէրութեանն Աստուծոյ, ասելով՝ արքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից: Ութերորդ դաս Սերովբէիցն է, որք լսին բերանք հրեղէնք, որք են երեքսրբենին փառաբանիչք, զոր լուաւն Եսայիաս՝ սուրբ սուրբ, սուրբ: Իններորդ դաս Քերովբէիցն է, որք լսին վերինք կամ հանճար մեծութեան, որք գովողք են մեծութեանցն Աստուծոյ, ասելով՝ Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քովք: Այս են իններորդ դասք երկնայինք եւ այս է գործ նոցա: Աւելի, քան զայս, մի՛ այլ ինչ իմասցուք, որպէս եղկելին Որոգինէս, որ աւելի, քան զգրեալսն, իմանալով՝ կործանեցաւ անկանգնելի, զերկնային դասսն զանազանելով. հրաշալիս իմն բարբառելով, զապիրատութիւն ի բարձունս խորհեցաւ՝ այսպիսի ասելով բան, թէ մարդիկ ոչ տեսանեն զհրեշտակս, եւ ոչ հրեշտակապետք՝ զհոգիս մարդկան, եւ Հոգին Սուրբ ոչ տեսանէ զՈրդի, եւ Որդին ոչ տեսանէ զՀայր: Բայց մեզ քաւ եւ մի՛ լիցի այսպիսի բարբառել հայհոյութիւն, այլ ասել զերկնային դասս փառաբանիչս աստուածութեանն: Եւ կարգաւ կայանին բաժանեն զլուսաւորութիւնն եւ ապա չափով լուսաւորութեանն դասս առեալ, որպէս անձն է Հօր, նոյնպէս եւ անձն Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Եւ արդ, որ ինչ երկնային դասուկցն է, բաւական լիցի այդչափ: Իսկ եկեղեցի որպէս հարսն մի գեղեցիկ, որ պահի ի համար մեծի փեսայի՝ որդոյ թագաւորին եւ զիւր սեռեակն յօրինէ կարգաւորութեամբ, որպէս զի նմանագոյն ինչ արքունական կարգաց յարդարիցէ զպատիւ որդոյ թագաւորին: Նոյնպէս եւ եկեղեցի երկնային դասուցն ընտանութիւն զիւրն կարգեաց զնմանութիւն եւ զդասս ինն թուով, քանզի ի

խորանին ինն դասս տեսանեմք զՂեւտացոցն եւ զպաշտօնէիցն, քանզի ոչ ամենեքեան միում արժանաւորեցան կայանիւ, այլ ըստ չափոյ արժանաւորութեանն առին զպատասաւորութիւնն:

Առաջին դասն՝ Մովսէս եւ Ահարոն եւ որդիք նորա:

Երկրորդ՝ գունդն Ամրամայ:

Երրորդ՝ գունդն Սահառայ:

Չորրորդ՝ գունդն Քերովնի:

Հինգերորդ՝ գունդն Ոզիէլի:

Վեցերորդ՝ դասն Ռաւբենի:

Եւթներորդ՝ դասն Սեմէի:

Ութերորդ՝ գունդն Մսողի:

Իններորդ՝ գունդն Մուսեայ:

Ապա թէ ասիցէ ոք, թէ Մովսէս եւ Ահարոն ի նոյն գնդէ իցեն, գիտասցէ, զի զատոյց զնոսա Աստուած, զի նոքա էին քահանայք՝ մատուցանել պատարագս, եւ արկանել խունկս քաւութեան, եւ իջուցանել զխորանն, եւ ծածկել զնա նուարտանաւն, այսինքն՝ սեկէ ծածկոցաւն: Ապա այլ սպասաւորք մատչէին եւ բառնային ըստ արժանաւորութեանն, ոմանք՝ զտախտակն եւ զքաւութիւնն, եւ ոմանք՝ զցիցս խորանին, եւ զապաւանդակն սն, եւ զկրսերագոյն կահ սպասուն սրբութեան: Եւ բանակիլ ոչ ընդ այլ դասս հրամայեցաւ Մովսիսի, այլ յարեւելից կողմանէ խորանին: Արդ, ահա յայտնապէս ցուցաք, թէ ըստ երկնային դասուցն ինն երեւին, եւ ի հնումն՝ զՂեւտացիսն: Պարգեւս, առաքեալ Սրբո Հոգոյն, համարի. բան իմաստութեան, բան գիտութեան, հաւատս, շնորհս բժշկութեան, աշողութիւն զօրութեանց, մարգարէութիւն, ընտրութիւն հոգոյ, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց: Դարձեալ յայտնապէս ցուցանէ մեզ առաքեալն ինն դասս եկեղեցոյ, ասելով այսպէս՝ զորս եդ Աստուած յեկեղեցիջ, այս են.

նախ՝ զԱռաքեալս,

երկրորդ՝ զՄարգարէս,

երրորդ՝ զՎարդապետս,

չորրորդ՝ զՋօրութիւնս,

հինգերորդ՝ Շնորհս բժշկութեան,

վեցերորդ՝ Օգնութիւնս,

եւթներորդ՝ Վարիչս,

ութերորդ՝ Ազգս լեզուաց,

իններորդ՝ թարգմանութիւնս լեզուաց:

Որքն են այսոքիկ. Առաջին դասք եկեղեցոյ՝ պատրիարգք, որ թարգմանի հայրապետք, որք ունին զաթոռ չորից աւետարանչացն: Եւ արդ, տես զզօրութիւն խորհրդոցն՝ փոխանակ չորեքկերպեան կենդանեացն եղան սուրբ աւետարանիչքն, որ նշանակէ. դէմք մարդոյն՝ զՄատթէոս, քանզի որպէս զմարդ ծնեալ ասէ զՔրիստոս ի Բեթղեհէմ: Իսկ Մարկոս՝ դէմք առիւծու նշանակի, քանզի նա ասէ՝ եւ ել Քրիստոս իբրեւ զառիւծ ի Յորդանանէ ի Դաբան: Եւ սատանայ առիւծ ասի վասն շաղղակերութեան եւ գազանաբար կապտելոյն եւ գիշելոյն զկենդանիսն: Այլ Փրկիչն մեր կոչեցաւ առիւծ վասն զօրութեանն եւ ի վերայ կենդանեացն թագաւորելով: Զնոյն եւ Մարկոս ասէ՝ ել Քրիստոս ի Յորդանանէ իբրեւ զառիւծ, այսինքն՝ թագաւորել: Իսկ դէմք եզինն նշանակէ զՂուկաս, վասն զի նա ասէ՝ փոխանակ աշխարհի զենեալ: Իսկ դէմք արծուոյն նշանակէ զՅովհաննէս, որպէս ասէ զվերստին քարոզութիւնն, եւ ոչ յերկրէ եւ ոչ ի մարմնաւորութիւնն սկսանի, որպէս եւ այլքն, այլ նման արագաթեւ արծուոյ սրաթռիչ լեալ՝ սկիզբն արարեալ ասէ. ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն. որով ամենայն եղեւ: Յիրաւի անուանէ զնա արծուի բարձրաթռիչ եւ թռչուն երկնից: Արդ, ահա ցուցաք փոխանակ երկնից՝ զեկեղեցի, եւ փոխանակ չորեքկերպեան կենդանեաց՝ զչորս աւետարանիչսն, եւ

նոցա փոխանակ՝ գհայրապետացն դասս եւ զնոցին աթոռսն: Աւագ եւ մեծ աթոռ Անտիոքայն՝ զՄատթէոսին, Աղէքսանդրուն՝ զՄարկոսին, Հռոմայն՝ զՂուկասուն, Եփեսոսին՝ զՅովհաննուն: Այս կարգաւորութեամբ վարեցաւ եկեղեցի մինչեւ յաւուրս Յուստիանոսի թագաւորին, ըստ չորեքկերպեան կենդանեացն, չորեքկուսի եղեմական բխմանն, ըստ չորեքեզերեան տիեզերաց, ըստ չորից աւետարանչացն բաժանեցաւ աշխարհս յիշխանութիւն չորից աւետարանչացն: Իսկ Յուստիանոս իբրեւ թագաւորեաց, կամ եղեւ փոխել զաթոռ սրբոյն Յովհաննու յԵփեսոսէ ի Կոստանդինուպոլիս, եւ հաւանեցուցանել զժողովն՝ եւ զսրբոյն Մատթէոսի՝ յԱնտիոքայ յԵրուսաղէմ, զի մինչեւ ի նորա ժամանակն ինքնագլուխ էին եպիսկոպոսքն, ոչ ինքեանք՝ ընդ այլոք եւ ոչ այլք՝ ընդ նոքօք. Կոստանդինուպոլիս՝ վասն թագաւորելոյ քաղաքին, եւ Երուսաղէմ՝ վասն զի քաղաք է երկնաւոր թագաւորին: Բայց ի ժողովսն հրամայեցին սուրբ հարքն՝ Երուսաղէմի եպիսկոպոսին գեր ի վերոյ նստիլ: Ահա, ասացաք զեկեղեցոյ առաջին դասն՝ զհայրապետսն, որք ունին զառաքելական զգեստն եւ զեմիփորոն հինգկրկին: Եւ գործ է հայրապետին ձեռնադրել զարհիեպիսկոպոսս, որք են ընդ վիճակաւ ի չորս բաժնի տիեզերաց: Եւ նա տայ հրաման վասն ժողով առնելոյ: Երկրորդ դասք եկեղեցոյ՝ արքեպիսկոպոսք: Կարգ է նոցա սպիտակ հանդերձ մինչեւ ծածկէ զոտս՝ աբականու պճղնաւոր, եւ շուրջառ, եւ եմիփորոն չորեքկրկին: Գործ է նոցա ձեռնադրել մետրապօլիտս, այսինքն՝ մայրաքաղաքաց եպիսկոպոս, եւ օրհնել ձէթ կնքոյն: Եւ ունին իշխանութիւն ձեռնադրել պատրիարգս: Երրորդ դասք եկեղեցոյ՝ մետրապօլիտք, որ կոչին մայրաքաղաքաց եպիսկոպոսք, որք ունին զնոյն հանդերձս սպիտակս մինչեւ ցպճղունսն, եւ շուրջառ, եւ եմիփորոն երեքկրկին: Գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս ի վերայ բերդից եւ գեղից եւ օրհնել զձէթ կնքոյ վասն յաւելուածին արկանելոյ յառաքելական ձիթոյն, զոր պահէ եկեղեցի յաւելուածով: Եւ երեք մետրապօլիտք ունին իշխանութիւն ձեռնադրել իւրեանց արքեպիսկոպոս: Չորրորդ դասք եկեղեցոյ եպիսկոպոսք են, որք ունին զնոյն կարգ: Գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս: Եւ երեք եպիսկոպոսունք ունին իշխանութիւն ձեռնադրել իւրեանց մետրապօլիտ: Եւ գործ է նոցա սեղան օրհնել, եւ աւազան, եւ իւղ օծութեան: Հինգերորդ դասք եկեղեցոյ՝ եռիսունք եւ պապասք, որք են քահանայք եւ երիցունք: Քահանայքն ի քաղաքս լինին, եւ երիցունքն՝ ի գեղս եւ յագարակս. եւ երկոքեանն մի են, բայց յաղագս պատուոյն եւ անուանքն զանազանին: Բայց կարգ է նոցա՝ նոցայն, բայց յեմիփորտէ, զի սոքա ուրար

միայն արկանեն ի վերայ երկոցունց ուսոցն, նոքա եւ թիկնոցիւ իշխեն կալ ի վերայ բեմին: Եւ գործ է սոցա պատարագ մատուցանել, եւ մկրտել, եւ պսակել, եւ ուր եպիսկոպոս չլինի, օրհնել զխաչն եւ զմատաղն: Եւ թէ հրաման առեալ իցէ յեպիսկոպոսէն, եւ զիւղն օծութեան իշխանութիւն ունի օրհնել եւ ձեռնադրել զդպիրն, եւ զգրակարդացն, եւ զկրօնաւորն: Վեցերորդ դասք եկեղեցոյ սարկաւագունք են: Եւ կարգ է նոցա նոյն, բայց հոլանի կայցեն, այսինքն՝ գլխիբաց, եւ գօտէլոյծ եւ զահեակ ուսովն արկեալ զուրարն: Գործ է նոցա Աւետարան կարդալ եւ քարոզել, եւ զսկիքն եւ զքշոցն բերել ի սեղեկէն ի սեղանն եւ ի սեղանոյն արտաքս զբաշխումն, եւ խունկ ծխել եւ առնել, որ ինչ միանգամ սպասաւորութիւն է. եւ նստիլ՝ ոչ ամենեւին, բայց յետ արձակման ժամուն, երբ հրամայէ քահանայն: Են եւ ի կանանց սարկաւագուհիք, ձեռնադրեալս վասն քարոզելոյ կանանց եւ կարդալ Աւետարան, զի մի՛ մտցէ անդ այր, եւ մի՛ նա արտաքս, քան զվանս կանանց, ելանիցէ: Բայց յորժամ քահանայք մկրտութիւն առնեն կատարեալ կանանց, գան սարկաւագուհիքն յաւազանն եւ ջրով լուասցեն զկանայսն, եւ քահանայն օծանէ ի ներքոյ վարագուրին: Եւ կարգ է սարկաւագուհեացն ամենայն ինչ հաւատաւորացն, բայց ի վարս պինդն, խաչ ունենայ ի վերայ ճակատին եւ կիսաթիկնոց՝ յաջմէ կողմանէ ուսոցն: Եւ մի՛ նոր ինչ կամ անկարգ համարեսջիք զայս, ով սուրբ եղբարք, այլ ի սրբոց առաքելոցն աւանդութենէ ուսանիմք, քանզի ասէ, թէ՝ յանձն առնեմ ձեզ զՓիլբէ զքոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցոյն: Եւթներորդ դասք եկեղեցոյ եպիսկոպոսք են, որ կոչին քորեպիսկոպոսք այժմ, գլխաւոր սարկաւագաց: Եւ կարգ է նոցա նոյն, եւ ուրար զերկոսին ուսովքն, եւ կալ գօտելոյծ եւ գլխիբաց, եւ իշխանաւ եպիսկոպոսին օրհնեն եկեղեցի եւ հրաման ունել ի վերայ քահանայից եւ եկեղեցականաց: Ութերորդ դասք եկեղեցոյ՝ գլխաւորք եպիսկոպոսաց, որք են կաթողիկոսք, որ ունին զպատուականագոյն աթոռն՝ նմանեալ սերովբէից: Կարգ է նոցա նոյնպէս հոլանի, այսինքն՝ գլխիբաց, եւ գօտելոյծ եւ ուրար զերկոսին ուսովքն: Բայց գործ է նոցա ձեռնադրել զեպիսկոպոսունս եւ ինքնական օրհնել զիւղն օծութեան: Իններորդ դասք վերագոյն քան զամենեսեան՝ պապիոս, որ այժմ կոչեն ֆռանկք պապ, նմանեալ քերովբէից: Կարգ է նոցա հոլանի, այսինքն՝ գլխիբաց, եւ գօտելոյծ: Եւ գործ է նոցա կարգել զդասս թագաւորաց. զի թէ մարդն պատկէր է Աստուծոյ, եւ որք ի Քրիստոս մկրտին՝ զՔրիստոս զգեցեալ են, որչափ եւս առաւել թագաւորք հաւատացեալք, որ ի վերայ գլխոյն բերեն զնշան տէրունական: Պարտ է նոցա նմանել Քրիստոսի, որ միայն խոնարհամտել եւ

զչարչարանսն Քրիստոսի ի մարմնի իւրում կրել, այլ փառացն նմանել որ ցուցանէ զքաղցրութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ, զի եւ հեթանոսաց թագաւորաց լուեալ՝ յօժարեսցին գալ յերկրպագութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:

Եւ այս են նմանութիւն երկնաւոր դասուցն.

Հրեշտակքն՝ առաքելական զգեստիւ յաղօթս.

Հրեշտակապետքն՝ քղանցիւ.

Իշխանութիւնքն՝ գնդաւ առաքելական զգեստիւ.

Զօրութիւնք՝ առաքելական զգեստիւ.

Աթոռքն՝ հիւպատիկք.

Պետութիւնքն՝ առաքելական զգեստիւ.

Տէրութիւնքն՝ պսակաւ առաքելական զգեստիւ.

Սերովբէքն՝ վեցթեւեանք.

Քերովբէքն՝ ութթեւեանքն եւ բազմաչեայքն:

Զայս ամենայն զմտաւ ածելով սրբոյն Կոստանդիանոսի թագաւորին, որ ըստ դիւթութեան կարգ էին հեթանոսաց՝ զայն եղծեալ խանգարեաց եւ այսպէս զերկնից եւ զեկեղեցոյ յարմարեաց զկարգս դասուցն ի պատիւ թագաւորութեանն եւ զտեղիս իւրաքանչիւր կայանացն որոշեաց եւ զգործն յայտնեաց, որ են այսոքիկ. Առաջին դաս պաղատին, որ է դարպաս, եղենդիարք, որ են պահապանք ոսկի վաղարին: Զգեստ է նոցա դիպակ ոսկեթելով կազմաւ, եւ ունին գաւազան ոսկի: Եւ գործ է նոցա տանել յառաջ զագաւորողսն եւ զայլս, զոր խնդրէ արքայն: Երկրորդ դաս՝ վեստիտորայն, որ են պսակակալք արքային: Զգեստ է նոցա դիպակք արծաթաթելս եւ գաղտազէնք ի կոպաղս ոսկիս, որ է կիսաթուր՝ ներքեւ հալաւին: Երրորդ դաս կանտիտորայն է, որ զոսկի տէգսն ունին, այսինքն՝ զոսկով կազմած խիշտսն: Զգեստ է նոցա ծիրանի դիպակ

ճամկաւոր եւ մանեակ ոսկի՝ ի պարանոցն: Եւ յորժամ ի ճանապարհ ելանէ արքայն, նոքա բառնան զխաչն սուրբ: Եւ ի նոցանէ լինին չորս արք, որք զզէնսն կրեն թագաւորին: Չորրորդ դաս պռոքսետորայն է որք զվաղերս ունին եւ ասպարս երկաթիս: Եւ զգեստ է նոցա ապրիշմէ դիպակ: Եւ յորժամ վախճանի արքայն, նոքա են, որ զդագաղսն եւ զգահոյսն բառնան: Հիգերորդ դաս եսկոպոտիրայն է, որք լինին մեծահասակք եւ ունին վահանս կմբրաւորս եւ ասպարս փոքրս: Եւ զգեստ է նոցա կտաւսն ուղորկ, եւ վարշամակս, որ է փակեղն, եւ ջաղջեր յոտսն, եւ գօտի ոսկի կրկին: Եւ ի նոցանէ լինին՝ որք սրկբունք եւ մանդատորք: Վեցերորդ դաս պաղատին՝ ստրատորքն, որք զձին թամբեն եւ հեծուցանեն զարքայն: Եւ զգեստ է նոցա ուռեւուռ կապայ, եւ ի ձեռս իւրեանց՝ թուր միասայրիք եւ ասպար փոքր: Եւթներորդ դաս պաղատին սքողարք են: Եւ զգեստ է նոցա գրատք կտաւիք եւ թեզնէ, բերանն դիպակով: Ունին նիզակս, որ է ռումբ, եւ սեւ ասպարս: Եւ ի նոցանէ լինին՝ որք զդրոշսն, այսինքն՝ զնշանակն, եւ զվիշապագլուխսն կրեն եւ կոչին սիգնայք: Ութերորդ դաս պաղատին՝ դեկանիոնքն, որք են աղեղնաւորք: Եւ ունին կրկին վարոցս եւ ասպարս լոկ: Եւ սքեմ է նոցա, այսինքն՝ զգեստս, այծենի գրատք կարմիր, եւ ունին մուճակք: Եւ յորժամ արքայն ի թամաշա ելանէ, նոքա վարեն զամբոխն: Եւ զսոսա կոչեն Եբրայեցիքն քերեթին, այսինքն՝ աղեղնաւորք: Իններորդ դաս պաղատին՝ կիւռսորքն, որք են սուրհանդակք հետեւակք: Եւ զգեստ է նոցա բամբակէ գրատք կազմաւ ճամկօք եւ զանկապանօք, ունին հողաթափս: Եւ են սոքա սպասաւորք: Եւ զսոսա կոչեն Եբրայեցիքն ոփելեթին, այսինքն՝ նետողք: Եւ ամենեքեան գլխիբաց կան եւ գօտիս ունին ոսկով, բայց միայն սոքա են անգօտի: Այսոքիկ են դասք թագաւորութեան պահապանք, զինուորութիւնք որձիք յիւրաքանչիւր կայանս, արտաքոյ ոսկի բեղարին, եւ այս է գործ նոցա եւ զգեստք: Են եւ այլ սպասաւորք արքունիք, ոմանք՝ որձիք, եւ ոմանք՝ կուրտք, որ ոչ են յինն զինուորութեանցն, այլ արձակք են, ոչ դասք են, ոչ չափս քանեաց, ոչ կայք տեղեաց պահպանութեան, այլ երբեմն շատ լինին եւ երբեմն՝ սակաւ: Առաջին՝ դեմետիտոսք, որք են պատգամաւորք: Երկրորդ՝ ռիքինարք, որք գյիշատակարանքն կարդան առաջի թագաւորին: Եւ ոսպիտարք ասին, որք արկանեն ձեռաց ջուր արքային: Չորրորդ՝ վինետորք ասին, որք զբաղանիս կազմեն եւ լուանան զարքայն: Հինգերորդ՝ տոհգլինարք, որք են տաճարապետք, որք զկոչեցեալսն ի հաց մատուցանեն առաջի արքային: Իսկ ի կոտորոցն լինին ակտարք որք են նշանագիրք: Եւ ոսպիտարք ասին, որք արկանեն ձեռաց ջուր

արքային: Ապոկրիսիարք ասին սպասաւորք եկեղեցոյ արքային: Իսկ փղակունքն՝ նոքա են կցորդասացք եւ արձակապաշտօնք: Սպուդէք՝ կրօնաւորք քաղաքին, որոց գործ է նոցա զգուբղայս, եւ զպաշտօնն, եւ զկանոնն երգել: Իսկ աբեղայք եւ մոնոզոնք, որք խարազնազգեստք են ըստ կամաց իւրեանց գան ի պաշտօնն: Իսկ փղակունք եւ սպուդէս մոնոզոնքն՝ ոչ մոնաքոսքն, որք են միայնակեցունք եւ ապաշխարողք: Դոմետիկոսք՝ որք են հաւատագիրք, որք զարտաքնոցն աստուածաբանութիւնս ուսին եւ եկեղեցականօքն վարժին: Այսոքիկ ամենեքեան ոչ են յինն դասուէն եկեղեցոյ եւ ոչ եթէ ի սպասաւորութիւն ինչ հպին, եւ ոչ յամբիոն ելանեն եւ ոչ ի բեմն, այլ են ամենեքեան փառաբանիչք, կարգեալք ի տան Տեառն: Եւ քանզի զայս ոչ վայրապար ինչ դրաք ի գիրս դատաստանի, այլ զի գիտասջիք, եթէ այսոքիւք պարտին Հայք ի Հոռոմոց եւ ի Ֆռանկաց, որպէս Աղուանիցն ուսուցանէ Պատմութիւն եւ այլք: Վասն որոյ հարկաւոր է այս կարգ յեկեղեցի ի հայրապետաց կարգիլ, եւ թէ անփոյթ արարեալ՝ միշտ պարտաւոր ցուցանին յատեան դատաստանին: Քանզի ի մեր Լուսաւորչէն եւ այս դասք պաշտման երեւի յեկեղեցիս, ըստ որում ի սրբոյն յիշի յԵղիշէի Պատմութեանն եւ այս դասք, ասելով՝ ընդ ձեզ կան գրակարդացք եւ սաղմոսասացք: Նմանապէս եւ սարկաւագաց յիշուին անուանք ի կանոնս եւ յայլս: Արդ, յայտ է յաւերածոյ եկեղեցեաց խանգարիլ եւ այս կարգի, եւ այլ ի հեղգութենէ ուղղչաց: Թէպէտ եւ այլ ինչ յօդեն պատճառք, սակայն արդարացուցանել ոչ կարեն: Եւ թէ այլազգ այսոքիկ յիշատակի ի սրբոյն Դիոնէսիոսի գիրսն եւ աստ՝ այլազգ՝ փոփոխմամբ, սակայն զթիւն ամբողջ պահեն, ուստի ոչ ինչ երկբայելիք են: Արդ, ըստ ճշմարիտ դատաստանի վարելի է զեկեղեցի այսպիսի կարգաւ ըստ երկնայնոցն, զի թէ տուն զերկրաւոր թագաւորի ըստ այսմ յօրինի, ո՞րչափ եւս երկնաւոր թագաւորին Քրիստոսի. եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

ԳԼՈՒԽ ՄԻՋ ՎԱՍՆ ՈՐ ՋՕՏԱՐ ՄԱՐԴ Ի ԲԱՆ ՂՐԿԷ, ԵՒ ՄԵՌԱՆԻ

Իսկ եթէ ոք զոք, որ չիցէ իւրն, ի գործ իւր առաքէ, եւ անդ որոգայթի, արեան պարտ է: Զգուշանալ հրամայէ կանոնքս՝ ոչ վայրապար զոք, որ չիցէ վարձկան եւ կամ այլ օրինակաւ իւր, ի գործ իւր առաքել, զի արեան դատաստան հրամայէ վնասելոյն լինել: Եւ այդ ցուցեալ է դատաստան հոգեւորապէս եւ

մարմնաւորապէս: Սակայն քննութիւն լիցի օրինակի առաքողին երախտեաց եւ պատահման մահուն կամայի եւ ակամայի:

ԳԼՈՒԽ ՄԻԷ ՎԱՍՆ ՈՐ ՎԱՐՁՈՎ ՂՐԿԷ ՋՄԱՐԴ Ի ԲԱՆ

Այլ թէ վարձկան ոք իցէ եւ ասիցէ ցտնատէր տանն, թէ առաքեա զիս կամ տուր ինձ գործ, զի արարից, իսկ նա յառջապատրաստ ծանուցանէ նմա զորոգայթ մահուն, եւ վարձկանն առ կարիս հարկի իւրոյ յանձն առնու, եւ սա կրկին զանպարտութեան բանն ասիցէ նմա, եւ պատահի վարձականին մեռանել, անպարտ է: Եւ թէ անզգուշութեամբ ի բազմաց վկայեալ վնասն առաքիցէ կամ գործել հրամայիցէ, եւ անդ հասանիցեն նմա որոգայթք մահու, արեան պարտ է: Յայտնի է այս դատաստան կանոնական: Ջի ըստ կամաց վարձկանին երթալ ի գործ՝ անպարտ է առաքողն, իսկ հարկաւորեալն եւ ի վկայեալ վնասն առաքեալ՝ ընդ դատաստանաւ արեան է, թէպէտ եւ վարձաւոր իցէ:

ԳԼՈՒԽ ՄԻԸ ՎԱՍՆ ՈՐ ԵԿԵՂԵՑԻ ՀԱԿԱՌԱԿ ԵԿԵՂԵՑՈՑ ՇԻՆԷ

Եւ վասն հակառակ եկեղեցի շինելոյ հարցեալ էիր, գրեալ է վասն այսորիկ, թէ՝ որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա օձ եւ սպանցէ, այսինքն՝ զհրաման եւ զկարգ, զոր եդին մարգարէքն, եւ առաքեալքն, եւ վարդապետքն եկեղեցոյ: Արդ, որ զհարանցն մերոց զեղեալ կարգն խափանէ՝ հակառակ եկեղեցոյ եկեղեցի շինէ յեպիսկոպոսաց կամ յերիցանց, նզովեսցին ի մահ եւ ի կեանս եւ յամենայն քահանայական կարգէ լուծցին. եւ այլք, որ նոցին կամակիցք իցեն, զնոյն պատիժս կրեսցեն, եւ զշինեալ եկեղեցին ի ժառանգաւորս տեղեացն թողցեն իրաւապէս: Ապա թէ մարդասիրապէս արասցեն, զգինս աշխատութեան տացեն ցնոսա, ապա թէ այս ոչ լինիցի, քակեսցեն հանդարտութեամբ եւ մի՛ այրեսցեն: Իսկ եթէ ամենայն բազմութիւնքն եպիսկոպոսօք, եւ քահանայիւք, եւ միաբան ժողովրդականօք զշինեալն կամեսցին, մի՛ ոք հակառակ վիճաբանեսցէ ընդդէմ միաբանական հրամանացն: Ապա թէ յանդգնի ոք եւ հուր դիցէ եկեղեցոյն կամ յաւագաց կաշառօք բռնութիւն բերիցէ ի մէջ եւ քակեսցէ զեկեղեցին, աստուածամարտ են այնպիսիքն եւ ընդ խաչահանունսն եղիցին, իսկ եթէ զղջանայցեն, մինչեւ ի մահ ապաշխարեսցեն եւ յետի օրն մահուան հաղորդեսցին: Լի ամենայն ճշմարտութեամբ եղեալ է այս դատաստան

կանոնական, զի հակառակս շինել յաղագս ագահութեանն է, խափանելի է, բայց կամօք եպիսկոպոսին եւ այլոցն հաստատի, զի մի՛ ժառանգութիւն ոք զեկեղեցի առնիցէ, եւ այլ եկեղեցի ըստ պատշաճի չտայցէ շինել, զի միշտ եպիսկոպոսաց է ժառանգութիւն եկեղեցոյ եւ ոչ քահանայից ըստ ինքեանց կամաց:

ԳԼՈՒԽ ՄԻԹ ՎԱՄՆ ԱՔՍՈՐԵԼՈՅ ԵԿԵՂԵՑՈՅ

Արդ, եթէ ոք արժանաւոր աքսորանաց իցէ, որք միանգամ յեկեղեցական կարգէ իցեն, ըստ իրաւանց այսպէս լիցի. սարկաւագք եւ քահանայք լուծցին յեպիսկոպոսէ, զի նա է ձեռնադրող նոցա. սարկաւագուիիք՝ ի սարկաւագաց. եւ աշխարհականք, եւ հաւատաւորք, եւ կրօնաւորք եւ որք միանգամ ի քահանայէ ձեռնադրին՝ ի քահանայէ. եւ եպիսկոպոսունք՝ յիւրեանց ձեռնադրողաց. եւ կաթողիկոս՝ կամ ի կաթողիկոսէ, կամ յիւրոց ձեռնադրողաց եպիսկոպոսաց. իսկ վարդապետք՝ ի վարդապետաց հրամանատուաց: Այլ վարդապետաց ոչ է ըստ իրաւանց զքահանայ աքսորել կամ առնուլ զկարգն, բայց միայն որոշել. նաեւ զիւրաքանչիւր զդասս խրատել, եւ յանդիմանել, եւ յուղղութիւն ածել իշխան լիցի, իսկ աքսորելն՝ նոցունց իշխանօքն, այսինքն՝ ձեռնադրողօքն, արասցէ, զի բանիւ իշխէ ամենեցունց: Այլ հայրապետք ամենեցունց իշխեն, այլ ոչ ամենեքեան՝ նմա, բայց ձեռնադրողք նորա:

ԳԼՈՒԽ ՄԼ ՎԱՄՆ ԱՔՍՈՐԵԼՈՅ ԹԱԳԱՒՈՐԱՑ

Թագաւորք, կարգեալք յԱստուծոյ, որպէս Իսրայէլին, յԱստուծոյ բարձցին կամ աքսորեսցին, իսկ ի մարդկանէ կացեալք՝ ի նոցունց աքսորեսցին: Եթէ իշխանք թագաւորեցուսցեն, եւ ոչ ըստ արժանոյն վարէ զթագաւորութիւնն, ի նոցունց կարգողացն աքսորեսցի. այլ որդոյ նորա ոչ է իրաւացի փոխել: Իսկ թագաւորութիւն սեպհական լիցի ի հօրէ անկեալ առ որդի: Իսկ իշխանս, զորս կարգէ թագաւորն, ի նմանէն եւ աքսորեսցին կամ խրատեսցին: Իսկ զթագաւոր խրատել, եթէ այնպէս հարկ լիցի պահել զխաղաղութիւն, կամօք լիցի այլ թագաւորի եւ հայրապետի, եւ հաւասարութեամբ ամենեցուն: Իսկ եթէ իշխանք եւ ազատք ինքեանց կացուցանեն իշխան, ի նոցունց միաբանութենէ աքսորեսցի եւ կամ խրատեսցի: Այլ զթագաւորի կարգեալ իշխան թագաւորն աքսորեսցէ եւ խրատեսցէ: Այլ իշխանաց իշխան՝ զիշխան խրատել կամ աքսորել եւ զազատ.

թէ ի նոցունց կարգեալ իցէ՝ նոցունց միաբանութեամբ արասցէ, եւ թէ ի թագաւորէ՝ թագաւորին կամօք արասցէ: Իսկ ազատք զզինուորս ոչ կարեն խրատել, այլ հանել յինքեանց. այլ խրատել իշխանաց լիցի: Նմանապէս եւ զինուորքն զշինականսն ոչ կարեն աքսորել եւ ոչ խրատել, այլ աքսորել՝ ազատք, եւ խրատել՝ իշխանք: Զայդ ըստ այսմ կարգի իրաւացի գիտեմ դատաստան ի տունս թագաւորաց:

ԳԼՈՒԽ ՄԼԱ ՎԱՍՆ ՈՐ ՀԱՆԷ ԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՎՆԱՍԷ ԵՒ ՍՊԱՆԷ

Եթէ ոք ի կենդանեաց, ի սրբոց կամ յանսրբոց, մտեալ յանդաստան, յայգի, կամ յայլ ինչ այսպիսի, յօրան կամ ի խոտ դիզեալ, եւ տէր նորա զչարեալ հարցէ եւ սպանցէ, դատաստան լիցի՝ զեղեալ՝ վնասն վճարմամբ հատուցանել, եւ նա զսպանալ կենդանին, զոր եհարն, ըստ իրաւանց լիով հատուսցէ, զի պարտ էր ի վնասէն հանել, այլ ոչ սպանել: Այլ ի հարկանելն քննութիւն լիցի. եթէ խրտուցեալ անկաւ եւ մեռաւ, զի ոչ զմեռանիլն կամէր, այլ զփախուցանելն, այդոքիկ յակամայից լինին,և զկէս գնոյն հատուսցէ. ի հարուածսն տեսցեն կամքն: Իսկ եթէ բժշկելի իցէ հարուածն, զխափանածոյն եւ զբժշկութեանն տայցէ. այլ եթէ անբժշկելի իցէ հարուածն՝ թէ ոտից եւ թէ այլոց, եւ ի սուրբ կենդանեաց իցէ, զգինն լիով տայցէ, եւ նորա շաղիղն լիցի, եւ թէ յանսրբոց՝ բաւանդակ հատուսցի: Եթէ կուրացուսցէ, կամ զատամն ընկենուցու, կամ զեղջիւր, կամ զկող բեկցէ, թէպէտ եւ բժշկեսցի, զգինն ընդ չորս բաժանեալ՝ մի մասն ընդ միոյ վնասուն տացի. եւ այդ ուտելեաց եւ անուտելեաց լիցի: Եւ թէ զագի կտրեսցէ, մի ի չորից մասանց լիցի: Ապա թէ անասնոյ տեառնն բազում անգամ ասացեալ իցէ զվնասն, եւ նա անփոյթ արասցէ, տեսցին այդոքիկ եւ այնպէս դատեսցին: Իսկ ոտից կաղութիւն մնացեալ՝ մի ի չորիցն լիցի գնոյն տուգանքն: Այլ ընդ խաղ եւ վայրապար վնասողացն առաւելութեամբ լիցի տուգանքն ի բեկանելն եւ ի հատուցանելն զգինն ի սպանանելն: